ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի 4-րդ հոդվածի 15-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

~~**հրագործական նյութ (արտադրանք)՝** ինքնաշխատ օգտագործման՝ հրագործական բաղադրիչների այրման և (կամ) պայթյունի միջոցով անհրաժեշտ արդյունքի ստացման համար նախատեսված հրագործական միացությունների (խառնուրդների), տարրերի, սարքավորումների ու սարքերի ամբողջություն.~~

<u>Հրագործական արտադրատեսակ՝ հրագործական բաղադրության այրման (պայթյունի) օգնությամբ անհրաժեշտ արդյունքի ստացման համար նախատեսված արտադրատեսակ.</u>

Նույն հոդվածի 17-19 պարբերությունները խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

~~**հրավառություն՝** հրագործական նյութի (արտադրանքի) և հրագործական բաղադրիչի ծրագրված կիրառում, որը կարող է վտանգել մարդու կյանքը, առողջությունը և վնասներ պատճառել շրջակա միջավայրին ու գույքին.~~

~~**բնակչությանը ազատ վաճառվող հրավառություններ՝** կենցաղային նշանակության հրավառություններ, որոնց հետ վարվելը չի պահանջում հատուկ գիտելիքներ ու հմտություն, և ճշտությամբ կատարելով դրանց փաթեթվածքների վրայի օգտագործման կարգը, ապահովվում է մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունը.~~

~~**տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություններ՝** հրավառություններ, որոնց հետ վարվելը պահանջում է հատուկ գիտելիքներ և հմտություն, կատարողների (օգտագործողների) համապատասխան որակավորում և (կամ) տեխնիկական սարքավորման որոշակի պայմանների ապահովում.~~

<u>«կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակ՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հրագործական արտադրատեսակ, որը նախատեսված է բնակչության կողմից կիրառման համար և որի շահագործումը կիրառման հրահանգին համապատասխան ապահովում է մարդկանց, ունեցվածքի և շրջակա միջավայրի անվտանգությունը.</u>

<u>տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակ՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հրագործական արտադրատեսակ, որի վաճառքը արգելված է ֆիզիկական անձանց և որը կարող է կիրառվել բացառապես համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից՝ ՏԻՄ կամ ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգով:</u>

21-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

~~Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների չափորոշիչները, ինչպես նաև տեխնիկական անվտանգության ոլորտում տեխնիկական անվտանգության նորմերը, կանոնները և հրահանգները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:~~

կենցաղային և տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների չափորոշիչները, դասակարգումները, ինչպես նաև տեխնիկական անվտանգության ոլորտում տեխնիկական անվտանգության նորմերը, կանոնները և հրահանգները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսյա ժամկետում: